# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

## ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Ք. Սևան

24.01.2018թ.
ժամը 11:00

**Հանձնաժողովի նախագահ՝** Մարի Սիմոնյան
**Գնահատողներ՝** Խաչիկ Կիրակոսյան
Վարդուհի Վարդանյան
**Բացողներ՝** Ռոմելա Հարությունյան
Մարի Առաքելյան
**Գնումները համակարգող՝** Լանա Դավթյան

**<u>ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/2 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին</u>**
(Մ. Սիմոնյան)

1. Տեղեկություններ **www.armeps.am** կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկված գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/2 ծածկագրով ընթացակարգի 1-ին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. **<u>Տեղեկություններ</u>** <u>www.armeps.am</u> **<u>կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.</u>**

(Մ. Սիմոնյան)

1.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի կարիքների համար <<Պահնորդական ծառայության>> ձեռքբերման նպատակով կազմակերպված ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/2 ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը |
|---|---|
| 1 | <<ԳԱՐԴԻԱՆ>> ՍՊԸ |
| 2 | <<Սեքյուրիթի Գրուպ>> ՍՊԸ |
| 3 | <<Աբսոլյուտ Սեքյուրիթի>> ՍՊԸ |
| 4 | ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչություն |
| 5 | <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

**2. <u>ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.</u>**

(Մ. Սիմոնյան)

2.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերը **<u>www.armeps.am</u>** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 <<ԳԱՐԴԻԱՆ>> ՍՊԸ-ի, <<Աբսոլյուտ Սեքյուրիթի>> ՍՊԸ-ի և <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են: <<Սեքյուրիթի Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում բացակայում են գնանշման հարցմանը մասնակցելու դիմումը /Հավելված 1/, մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությունը /Հավելված 2/, մասնակցի իրական շահառուների մասին տվյալները /Հավելված 2.1/ և տուժանքի մասին համաձայնագիրը (հայտի ապահովում) /Հավելված 8/: ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում բացակայում է մասնակցի իրական շահառուների մասին տվյալները /Հավելված 2.1/:

2.3 <<ԳԱՐԴԻԱՆ>> ՍՊԸ-ի և <<Աբսոլյուտ Սեքյուրիթի>> ՍՊԸ-ի կողմից հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են սույն ընթացակարգի հարվերով սահմանված պայմաններին (պահանջներին):

<<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացրած գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում /Հավելված 1/, մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությունում /Հավելված 2/ և որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությունում /Հավելված 3/ ընթացակարգի ծածկագիրը լրացված է սխալ՝ <<ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/2>>-ի փոխարեն լրացված է <<ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/1>>, իսկ տուժանքի մասին համաձայնագրին (հայտի

ապահովում) /Հավելված 8/ կից <<մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագրի>> փոխարեն ներկայացվել է <<պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր>>:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 40-րդ կետի 4-րդ ենթակետով հանձնաժողովը որոշեց <<ԱՐ-ՄՈԲԻԼ>> ՓԲԸ-ի հայտը մերժել՝ հայտի ապահովումը իրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացնելու պատճառաբանությամբ,իսկ <<Սեքյուրիթի Գրուպ>> ՍՊԸ-ի հայտը մերժել՝ հայտի ապահովման բացակայության պատճառաբանությամբ:

2.4 Նկատի ունենալով, որ ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության կողմից ներկայացված հայտում բացակայում է մասնակցի իրական շահառուների մասին տվյալները /Հավելված 2.1/, հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 41-րդ կետով որոշեց ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/2 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել, որի մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությանը առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 6. <u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.</u>

(Մ. Սիմոնյան)

6.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԳՀԾՁԲ-18/2 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 25.01.2018թ.-ին ժամը 17:00, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Մ. Սիմոնյան

Անդամներ՝ Խ. Կիրակոսյան

Վ. Վարդանյան

Ռ. Հարությունյան

Մ. Առաքելյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան